

**ԳԻՐ ՆԱՅՐԱԳՆՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՆԱՏԱՆԱՅ
ԱՌ ՍԻՐԵՅՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՆԱՐԱԶԱՏ ԶԱՄԱԿՆ
ՄԱՅՐ ԱԹՈՒՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾԻՆ
ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ԱՐԹՈՒՐ ՎԱՐԺԱԳՆՏԵԱՆ
ՈՐ Ի ՄՈՍԿՈՒԱ, ՌԴ**

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Նայրապետական սիրով Մեր օրհնությունն ու բարեմաղթանքներն ենք յղում արժանաւոր հայորդուդ:

Ռուսաստանի եւ Նոր Նախիջևանի Նայոց թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսեանից գոհունակութեամբ փոխակազանք ազգային ու հոգեւոր մեր կեանքից ներս Ձեր արդիւնաշատ գործունէութեանը:

Գովարժան Է Ձեր աւանդը ի նպաստ Նայաստանի եւ Արցախի զօրացման եւ հայրենաբնակ մեր ժողովրդի բարօրութեան: Ձեր մշտական ուշադրութիւնն ու ազնիւ հոգածութիւնն են վայելում արցախեան պատերազմի հաշմանդամ, հերոս ազապամարտիկները, ովքեր իրենց կեանքի ու առողջութեան գնով կերպեցին մեր արդի պատմութեան փառաւոր յաղթանակը:

Գոհունակութիւն է Նայրապետիս համար անդրադառնալ նաեւ, որ Դուք անկեղծ սիրով ու նուիրումով աջակցում էք Ռուսաստանի Դաշնութիւնում մեր Սուրբ Եկեղեցու առաքելութեանը՝ որպէս Ռուսաստանի եւ Նոր Նախիջևանի Նայոց թեմի բարերար: Ուրախ է Մեր հոգին, որ Դուք՝ նախանձախնդիր յաւեր պայծառութեանը հաւաքաւոր հայորդիների հոգեւոր ու ազգային կեանքի, մեծագումար նուիրատւութեամբ մասնակցեցիք նաեւ թեմի Առաջնորդանիստ եկեղեցու եւ համալիրի կառուցման օրհնեալ գործին: Ձեր ազնիւ յանձնառութեան շնորհիւ Ձեր անունը արձանագրուած է փառաշուք եկեղեցու պատմութեան մէջ եւ միշտ երախտագիտութեամբ պիտի յիշուի հայորդիների հոգիներում:

Բարձր գնահատանքի արժանացնելով Ձեր բազմաթիւն ծառայութիւնները մեր Սուրբ Եկեղեցուն եւ սիրով ընդառաջելով թեմակալ Առաջնորդի ազնիւ խնդրանքին, Նայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

Ս Ո Ւ Ր Բ Գ Ր Ի Գ Ո Ր Լ Ո Ւ Ս Ա Ւ Ո Ր Ի Չ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Աղօթում ենք, որ Ամենախնամ Աստուած առաքապէս օրհնի երախտարժան բարերարիդ եւ Ձեր ընտանիքը՝ շնորհելով կենաց արեւշարութիւն, ազգանուր եւ եկեղեցաշէն գործոց նորանոր յաջողութիւններ:

«Նաստարտուն եղերուք, անշա՛րժ կացէք, առաւել լերուք ի գործ Տեառն յամենայն ժամ. գիտասջի՛ք՝ զի վաստակքն Ձեր ո՛չ են ընդունայն առաջի Տեառն» (Ա. Կորնթ. ԺԵ. 58):

Օրհնութեամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՅ**

Տուաւ Կոնդակս ի 17-ն Սեպտեմբերի
յամի Տեառն 2013 եւ ի թուին հայոց ՌՆԿԲ.
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարս 796